

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սպորտի քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գործունեության նպատակները, խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, գործունեության կազմակերպումը, ղեկավարումը և համակարգումը:

2. Վարչությունը Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է: Վարչությունը ենթարկվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարին (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար): Վարչության աշխատանքները համակարգում է Նախարարի համապատասխան տեղակալը:

3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ օրենքներով, Նախարարության կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

4. Վարչությունը կազմավորվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Վարչության կանոնադրությունը (փոփոխությունները և/կամ լրացումները) հաստատում է Նախարարը:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչություն:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության նպատակներն ըստ բաժինների՝

1) **զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի նպատակներն են.**

ա. ֆիզիկական դաստիարակության և զանգվածային սպորտի, այդ թվում՝ դպրոցական և ուսանողական սպորտի, պետական քաղաքականության նպատակների և առաջնային ուղղությունների սահմանումն ու իրականացումը.

բ. բնակչության առողջ կենսակերպի, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված ժամանակակից համակարգի ստեղծումն ու զարգացումը.

գ. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացման, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման, բնակչության առողջության ամրապնդման, առողջ ապրելակերպի ձևավորման և ակտիվ հանգստի կազմակերպման գործին, ինչպես նաև ֆիզիկապես կոփված, կրթված և հայրենասեր սերնդի ձևավորմանն աջակցումը.

դ. բնակչության ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի մշակումը.

2) **մանկապատանեկան սպորտի բաժնի նպատակներն են.**

ա. մանկապատանեկան սպորտի պետական քաղաքականության նպատակների և առաջնային ուղղությունների սահմանումն ու իրականացումը.

բ. մանկապատանեկան սպորտի դերի բարձրացման, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման, ինչպես նաև ֆիզիկապես կոփված, կրթված և հայրենասեր սերնդի ձևավորմանն աջակցումը.

գ. բնակչության ֆիզիկական դաստիարակության և մարզիկների պատրաստման գիտականորեն հիմնավորված համակարգի մշակումը,

3) **սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի նպատակներն են.**

ա. սպորտի բարձրագույն նվաճումների պետական քաղաքականության նպատակների և առաջնային ուղղությունների սահմանումն ու իրականացումը,

բ. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը,

գ. մարզիկների պատրաստման գիտականորեն հիմնավորված համակարգի մշակումը,

դ. հանրապետությունում օլիմպիական շարժման զարգացմանն աջակցումը,

8. Վարչության խնդիրներն ըստ բաժինների՝

1) զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի խնդիրներն են.

ա. բնակչության ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի գործնականում ներդնելը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

բ. ֆիզիկական կուլտուրայի և զանգվածային սպորտի բնագավառներում գիտամեթոդական ու հետազոտական աշխատանքների իրականացման, գիտական հետազոտությունների անցկացման ծրագրերի համադասման ապահովումը.

գ. առողջ կենսակերպը նախընտրող ազգաբնակչության ակտիվ հանգստի համար նպաստավոր պայմանների ապահովմանը միտված աշխատանքների ձեռնարկումը.

դ. զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության մշակված համակարգի հանրայնացումը, զարգացման հայեցակարգերի և նպատակային ծրագրերի կիրարկումը:

2) մանկապատանեկան սպորտի բաժնի խնդիրներն են.

ա. բնակչության ֆիզիկական դաստիարակության և մարզիկների պատրաստման գիտականորեն հիմնավորված համակարգի գործնականում ներդնելը.

բ. մանկապատանեկան սպորտի մասնագետների պատրաստմանն աջակցելը, ինչպես նաև նրանց վերապատրաստման աշխատանքների կազմակերպումը.

գ. մանկապատանեկան սպորտի բնագավառում գիտամեթոդական ու հետազոտական աշխատանքների իրականացման, գիտական հետազոտությունների անցկացման ծրագրերի համադասման ապահովումը.

3) սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի խնդիրներն են.

ա. մարզիկների պատրաստման գիտականորեն հիմնավորված համակարգի գործնականում ներդնելը,

բ. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում գիտամեթոդական ու հետազոտական աշխատանքների իրականացման, գիտական հետազոտությունների անցկացման ծրագրերի համադասման ապահովումը,

գ. Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզաձևերի ազգային ֆեդերացիաների գործունեությանն աջակցումը,

դ. սպորտի բարձագույն նվաճումների քաղաքականության քարոզչությունը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

9. Վարչությունը կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները.
- 1) զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժին,
 - 2) մանկապատանեկան սպորտի բաժին,
 - 3) սպորտի բարձրագույն նվաճումների բաժին:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Վարչության գործառույթներն ուղղված են սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործմանը և խնդիրների լուծմանը:

11. Վարչության գործառույթներն ըստ բաժինների՝

1) զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի գործառույթներն են.

ա. մշակում է բաժնի գործունեությանը վերաբերող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, ընդհանրացնում իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնում առաջարկություններ սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

բ. մշակում և իրականացնում է հայեցակարգեր ու պետական նպատակային ծրագրեր սպորտի բնագավառում.

գ. իր իրավասության սահմաններում մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը.

դ. իրականացնում է հանրապետությունում բնակչության ֆիզիկական դաստիարակության գործի կազմակերպման աշխատանքների մեթոդական ղեկավարումը.

ե. վարում է զանգվածային սպորտի աշխատանքների վիճակագրական հաշվառումը.

զ. իրականացնում է ֆիզիկական կուլտուրայի և զանգվածային սպորտի ոլորտի քարոզչությունը.

է. ապահովում է պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության տարածքային քաղաքականության իրականացումը.

ը. աջակցում է ազգային սպորտային խաղերի տարածմանն ու զարգացմանը, սպորտաժամանակային գործունեության բազմազանության ապահովմանը.

թ. մշակում է միջազգային միջգերատեսչական պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակմանը, ապահովում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումը զանգվածային սպորտի բնագավառում.

ժ. միջազգային սպորտի համագործակցության նպատակով աջակցում է հաշմանդամություն ունեցող սպորտային խմբերի և անհատ մարզիկների օտարերկրյա պետություններ գործուղմանը, աջակցում է միջազգային սպորտային համագործակցության զարգացմանը.

ժա. համագործակցում և մասնակցում է միջազգային սպորտային կազմակերպությունների աշխատանքներին.

ժբ. մշակում է հանրապետական զանգվածային մարզական բնույթի ծրագրեր.

ժգ. այլ գերատեսչությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մշակում է սովորողների ֆիզիկական կուլտուրայի, դպրոցական և ուսանողական սպորտի, զանգվածային միջոցառումների, հանգստի ու ազատ ժամանցի ծրագրեր և կազմակերպում դրանց իրականացումը.

ժդ. համակարգում է «ֆիզիկական կուլտուրա» առարկայի, դպրոցական և ուսանողական սպորտի պետական կրթական չափորոշիչների մշակման և դրանց իրականացման աշխատանքները.

ժե. իրականացնում է դպրոցական և ուսանողական սպորտի, «ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցման որակի և արդյունավետության մոնիտորինգ,

ժզ. մշակում է գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպման ծրագրեր.

ժէ. ստեղծում և ներդնում է վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգ ու համապատասխան ռեգիստրների միջոցով վարում զանգվածային սպորտի, այդ թվում՝ դպրոցական և ուսանողական սպորտի, և ֆիզիկական դաստիարակության բնագավառներում վարչական վիճակագրությունը, իրականացնում ադապտիվ մարզական կազմակերպությունների հաշվառումը.

ժը. քննարկում է իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ նամակները (առաջարկությունները, դիմումներն ու բողոքները), նպաստում դրանցում արձարծված հարցերի լուծմանը.

ժթ. զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բնագավառներում վերլուծում է քաղաքականությունը, ուսումնասիրում քաղաքականության միտումներն ու օրինաչափությունները և մշակում է քաղաքականության ռազմավարությունը, հայեցակարգերն ու նպատակային ծրագրերը և իրականացնում դրանց մոնիտորինգ.

2) մանկապատանեկան սպորտի բաժնի գործառույթներն են.

ա. մշակում է բաժնի գործունեությանը վերաբերող օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծեր, ընդհանրացնում իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնում առաջարկություններ մանկապատանեկան սպորտի և

արտաուսումնական դաստիարակության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

բ. մշակում և իրականացնում է հայեցակարգեր ու պետական նպատակային ծրագրեր մանկապատանեկան սպորտի բնագավառում.

գ. իր իրավասության սահմաններում մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը.

դ. իրականացնում է հանրապետությունում մանկապատանեկան սպորտի մեթոդական ղեկավարումը.

ե. աջակցում է Հայաստանի Հանրապետությունում կատարվող մարզական հերթափոխի պատրաստման աշխատանքներին.

զ. իրականացնում է մանկապատանեկան սպորտի ոլորտի քարոզչությունը.

է. ապահովում է պետական կառավարման տարածքային մարմինների հետ համատեղ մանկապատանեկան սպորտի տարածքային քաղաքականության իրականացումը.

ը. ապահովում է մանկապատանեկան սպորտի բնագավառում գիտամեթոդական աշխատանքների իրականացման ծրագրերի համակարգումը.

թ. մշակում է միջազգային միջգերատեսչական պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակմանը, ապահովում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումը մանկապատանեկան սպորտի բնագավառում.

ժ. իրեն վերապահված լիազորությունների սահմաններում իրականացնում է Նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների ուսումնամարզական գործունեության ուսումնասիրություններ.

ժա. սահմանում է մանկապատանեկան սպորտի բնագավառում գիտատեխնիկական զարգացման ուղղությունները, աջակցում մարզական կազմակերպությունների և պետական ուսումնական հատատությունների (մարզական մասով) նյութատեխնիկական վերազինմանը.

ժբ. մշակում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական նպատակային ծրագրերին համապատասխան տեղեկատվական, գիտամեթոդական, ուսումնական, գիտական, վերլուծական և այլ բնույթի ծրագրեր.

ժգ. մշակում է գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպման ծրագրեր.

ժդ. մասնակցում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական կրթական չափորոշիչների մշակմանը.

ժե. ստեղծում և ներդնում է վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգ ու համապատասխան ռեգիստրների միջոցով վարում մանկապատանեկան սպորտի բնագավառում

վարչական վիճակագրությունը, իրականացնում մարզական մանկապատանեկան կազմակերպությունների հաշվառումը՝ անկախ սեփականության ձևից.

ժգ. քննարկում է իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ մանկապատանեկան սպորտի վերաբերյալ նամակները (առաջարկությունները, դիմումներն ու բողոքները), նպաստում դրանցում արծարծված հարցերի լուծմանը.

ժէ. վերլուծում է մանկապատանեկան սպորտի քաղաքականությունը, ուսումնասիրում քաղաքականության միտումներն ու օրինաչափությունները և մշակում է քաղաքականության ռազմավարությունը, հայեցակարգերն ու նպատակային ծրագրերը և իրականացնում դրանց մոնիտորինգ.

3) սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի գործառույթներն են.

ա. մշակում է բաժնի գործունեությանը վերաբերող օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծեր, ընդհանրացնում իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնում առաջարկություններ սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,

բ. մշակում և իրականացնում է հայեցակարգեր ու պետական նպատակային ծրագրեր բարձրագույն սպորտի բնագավառում,

գ. իր իրավասության սահմաններում մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը,

դ. բնագավառի վաստակաշատ անձանց ներկայացնում է պետական պարգևների և պատվավոր կոչումների,

ե. ներկայացնում է մարզական կոչումների և կարգերի, հանրապետական առաջնությունների մրցանակակիրներին, բնագավառի նվիրյալներին և կազմակերպություններին ներկայացնում է պարգևատրման՝ մեդալներով ու դիպլոմներով,

զ. Նախապատրաստում է սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու, պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու և անձնագրերի գործողության ժամկետի երկարացման վերաբերյալ փաստաթղթերը (միջնորդությունները).

է. մշակում է միջազգային միջգերատեսչական պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով մասնակցում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակմանը, ապահովում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումը սպորտի բնագավառում,

ը. ապահովում է բարձրագույն սպորտի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների իրականացման ծրագրերի համակարգումը,

թ. միջազգային սպորտի համագործակցության նպատակով աջակցում է սպորտային խմբերի և անհատ մարզիկների օտարերկրյա պետություններ

գործուղմանը, աջակցում է միջազգային սպորտային համագործակցության և փոխանակումների զարգացմանը,

ժ. համագործակցում և մասնակցում է միջազգային սպորտային կազմակերպությունների աշխատանքներին,

ժա. մշակում է համահայկական մարզական բնույթի ծրագրեր,

ժբ. վերլուծում է ծառայությունների շուկան ֆիզիկական կուլտուրայի, սպորտի բնագավառներում, կազմակերպում իրավիճակային տվյալների ամփոփումը և տարածումը,

ժգ. մշակում է բարձրագույն սպորտի բնագավառում պետական նպատակային ծրագրերին համապատասխան տեղեկատվական, գիտամեթոդական, ուսումնական, գիտական, վերլուծական և այլ բնույթի ծրագրեր,

ժդ. մշակում է գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպման ծրագրեր,

ժե. ստեղծում և ներդնում է վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգ ու համապատասխան ռեգիստրների միջոցով վարում բարձրագույն սպորտի բնագավառում վարչական վիճակագրությունը,

ժզ. քննարկում է իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ սպորտի բարձրագույն նվաճումների վերաբերյալ նամակները (առաջարկությունները, դիմումներն ու բողոքները), նպաստում դրանցում արձարծված հարցերի լուծմանը,

ժէ. բարձրագույն սպորտի բնագավառում՝ վերլուծում է քաղաքականությունը, ուսումնասիրում քաղաքականության միտումներն ու օրինաչափությունները և մշակում է քաղաքականության ռազմավարությունը, հայեցակարգերն ու նպատակային ծրագրերը և իրականացնում դրանց մոնիտորինգ:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

12. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Նախարարության հաստիքացուցակով նախատեսված կազմով:

13. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում, ղեկավարում և համակարգում է Վարչության պետը, որն անմիջական հաշվետու է Նախարարին, հաշվետու է վարչության աշխատանքները համակարգող նախարարի տեղակալին:

14. Վարչության պետի և Վարչության աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: